Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

ՄԱՅՐԸ

Լսելով կռվի արհավիրքների,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Ես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,
Եվ ոչ էլ նույնիսկ իրան՝ հերոսին...
Կըմխիթարվի, ո՜հ, կինը մի օր,
Ընկերն ընկերին կանի մտահան.
Բայց մի հոգի կա մի տեղ սգավոր —
Նա հիշելու է մինչև գերեզման...
Այս մեր կեղծավոր, ստոր աշխարքում,
Այսքան գարշելի գործերի շարքում
Ես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն —
Թշվառ մայրերի արտասուքն է այն։
Նրանք չեն մոռանալ իրանց զավակին,
Որ խորտակվել է արյունոտ արտում,
Որպես սգավոր ուռենին կրկին
Չի բարձրացնելու ճյուղերը տրտում։